ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՍԱՍՈՒՆ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

03.03.2026թ-ից՝ մինչև 03.06.2026 թվականը աշխատաժամանակի վերաբերյալ

1) Իմ իրավասությունների շրջանակներում աջակցել եմ պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառավարման, պահպանման և օգտագործման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին, ըստ անհրաժեշտության՝ ապահովել անշարժ գույքի օտարման, վարձակալության և պայմանագրերից բխող իրավունքների պետական գրանցման աշխատանքներ.

2) կազմել և ներկայացրել եմ անշարժ գույքի, /շենքեր, շինություններ,հողեր, հողատեսքեր և այլն/ և ենթակառուցվածքների / ջրամատակարարում և ջրահեռացում, գազիֆիկացում, էլեկտրաֆիկացում, բնակարանային տնտեսություն, համատիրություններ, կապ և այլն/ վերաբերյալ համապատասխան տեղեկություններ.

3) աջակցել եմ մարզի ենթակառուցվածքների / ջրամատակարարում և ջրահեռացում, գազիֆիկացում, էլեկտրաէներգիայի մատակարարում/ գործունեության ոլորտի և մարզային ենթակայության ինքնուրույն ջրամատակարարում և ջրահեռացում իրականացնող համայնքների և այլ կոմունալ ծառայությունների աշխատանքներին.

4) կատարել եմ մարզի համայնքների և մարզային ենթակայության կազմակերպությունների անշարժ գույքի / վարձակալություն, օտարում, դուրսգրում և այլն/ և ենթակառուցվածքների գործունեության հետ կապված գործարքներ.

5) հավաքագրել և պետական սեփականություն հանդիսացող գույքի կառավարման և պահպանման /օգտագործման/ ողղությամբ կատարվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն եմ ներկայացրել Վարչության պետին.

6) ուսումնասիրել եմ մարզի ենթակառուցվածքների / ջրամատակարարում, ջրահեռացում, գազամատակարարում, էլ. Էներգիայի մատակարարում/ գործունեության ոլորտի և մարզային ենթակայության ինքնուրույն ջրամատակարարում և ջրահեռացում իրականացնող համայնքների և այլ կոմունալ ծառայությունների աշխատանքները և դրանց վերաբերյալ առաջարկությունները ներկայացրել Վարչության պետին:

7) գույքագրել և հաշվառել եմ մարզի տարածքում պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը, կազմել բնակարանային ծրագրեր, ներկայացրել Վարչության պետին:

8) կազմել եմ մարզի համայնքների և մարզային ենթակայության կազմակերպությունների անշարժ գույքի / վարձակալություն, օտարում, դուրսգրում և այլն/ և ենթակառուցվածքների գործունեության հետ կապված գործարքների վերաբերյալ առաջարկություններ և ներկայացրել Վարչության պետին.

9) նախապատրաստել եմ Վարչության առջև դրված գործառույթներից, խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ ու ներկայացրել Վարչության պետին.

10) կազմել և Վարչության պետին եմ ներկայացրել Վարչության՝ ոլորտին առնչվող աշխատանքային ծրագիրը.

11) հավաքագրել և այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստացված պետական սեփականության, ենթակառուցվածքների գործունեության, բնակարանային ոլորտի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացրել Վարչության պետին.

12) քննարկել եմ համայնքներից, քաղաքացիներից, կազմակերպություններից ստացված դիմումները, գրությունները և արդյունքները ներկայացրել Վարչության պետին:

Քաղաքաշինության, հողաշինության

և ենթակառուցվածքների կառավարման

վարչության փորձագետ՝ Հակոբջան Բիձյան

03.06.2026թ.